

6 Յանգոյն ասացելոցս<sup>1</sup> Երանելոյն<sup>2</sup> Պաւղոսի առ Եբրայեցիսն կարգեալ զանուանս<sup>3</sup> գովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն<sup>4</sup>. որով զվարձահատոյց<sup>5</sup> միխթարութիւն ընկալան յամենապարգեւողէն<sup>6</sup> Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն. նա եւ զժանդագործին<sup>7</sup> Րահաբու<sup>8</sup> զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ: 7 Իսկ իբրեւ հայեցեալ ի բազմախումուն գումարութիւն արդարոցն<sup>9</sup> զսակաւուցն զանուանս յայտ առնէ, եւ զայլովք<sup>10</sup> եւս զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պատմելոյ: 8 Ի կիր արկանէ այնուհետեւ նշանակել միանգամայն<sup>11</sup> զփորձութիւնս ի վերայ յարձակեալս եւ զնոցա<sup>12</sup> զանընդդիմակաց զնահատակութիւնսն, զորս եւ պատուականս քան զաշխարհական վաճառս<sup>13</sup> համարի<sup>14</sup>:

9 Սոյն արինակ եւ ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ<sup>15</sup> ունին զբաշխութիւնս ամենայն զաւրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրանիցն զբարեյաղթութիւն, եւ զոմանց՝ ըստ աշխարհակիր<sup>16</sup> կարգաց զմարտից եւ զպատերազմաց արութիւնսն, որպէս զՆերքոտայն<sup>17</sup> եւ զՍամփսոնին եւ զԴավթայն: 10 Եւ զոմանց զբնական զիմաստութիւն<sup>18</sup> գովեալ<sup>19</sup> աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսեփայն<sup>20</sup> յԵգիպտոս, եւ զԴանիէլին ի Բաբելոն<sup>21</sup>: 11 Յորոց<sup>22</sup> եւ հզաւր թագաւորացն<sup>23</sup> խրատիչք էին<sup>24</sup>, զաշխարհական<sup>25</sup> կենցաղոյս<sup>1</sup> զհանգամանսն<sup>2</sup> ցուցանէին, հանդերձ ամե-

1 *bcde*լ ասացելոցս. / *միւսն*. ասացելոյս

2 վ Երանելոյն / *միւսն*. Երանելոյն

3 *d* զանուանքս

4 *d* հավատոցն ճշմարտութիւն

5 *b* զվարձահատոց

6 *bc* յամենապարգեւէն

7 *cde* ժանդագործին

8 *c* Րահաբաւ

9 *b* արդարոցն / *c* արդարոց / *միւսն*. արդարեւ

10 *bc* զայլովք

11 *bc* զմիանգամայն

12 *b* զնոցա / *միւսն*. նոցա

13 *c* զաշխարհական վաճառս / *միւսն*. զաշխարհս առ վաճառ

14 *bc* համարին

15 *b* նշանեալ

16 *b* աշակերտակիր / վ աշխարհակիր / *միւսն*. աշխարհագիր

17 *b* զերթօտայն / *c* զեփթայեայն *ուղղ*. զերթօտայն

18 *b* իմաստութիւն

19 *b* գովել

20 *b* Յովսեփայն

21 *b* Բաբելոն

22 *bc* որոց

23 *d* թագաւորութեանցն

24 *c* եղէն *ի/ս*. էին

25 *c* զաշխարհական / *միւսն*. զաշխարհակալ